ՀՀ Շիրակի մարզի
ընդհանուր իրավասության դատարան
Վճիռը հրապարակվել է 20.02.2017թ.
Դատավոր Բագրատ Մկրտչյան

Քաղաքացիական գործ
թիվ ԿԴ5/0130/05/17

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

29 հունիսի, 2018թ. ք. Երևան

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան), հետևյալ կազմով՝

նախագահող դատավոր Կ. Չիլինգարյան,
դատավոր Ա. Խառատյան,
դատավոր Մ. Հարթենյան,

մասնակցությամբ՝ հայցվոր Գոհարիկ Շահբազյանի,
հայցվորի ներկայացուցիչ Հայկ Եգանյանի,

պատասխանողի ներկայացուցիչներ Արմեն Ստամբոլցյանի և Անահիտ Սուվարյանի,

երրորդ անձ՝ Արփինե Նիկողոսյանի,
երրորդ անձի ներկայացուցիչ Անի Թորոսյանի,

դռնբաց դատական նիստում քննելով թիվ ԿԴ5/0130/05/17 քաղաքացիական գործով, ըստ հայցի Գոհարիկ Կարլենի Շահբազյանի ընդդեմ ՀՀ Շիրակի մարզպետի (երրորդ անձ՝ Արփինե Սըկըրտիչի Նիկողոսյան)՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջի մասին, ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 20.02.2018թ. վճռի դեմ հայցվորի կողմից բերված վերաքննիչ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

24.05.2017թ. ՀՀ վարչական դատարան ներկայացրած հայցադիմումով հայցվորը խնդրել է անվավեր ճանաչել Արփինե Նիկողոսյանին ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 38 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) տնօրենի պաշտոնում նշանակելու և աշխատանքային պայմանագիր կնքելու մասին պատասխանողի 02.03.2017թ. թիվ 90-Ա որոշումը (այսուհետ՝ Որոշում) և, որպես Որոշման անվավերության հետևանք, անվավեր ճանաչել դրա հիման վրա պատասխանողի և Արփինե Նիկողոսյանի միջև կնքված աշխատանքային պայմանագիրը:

Հայցապահանջի հիմքում հայցվորը դրել է հետևյալ փաստերը.

պատասխանողը 21.11.2016թ. թիվ 445-Ա որոշմամբ հայցվորին աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ 2016թ. նոյեմբերի 26-ից ազատել է Կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 25.11.2011թ. կնքված թիվ 27/2 աշխատանքային պայմանագիրը, և 28.11.2016թ. թիվ 476-Ա որոշմամբ Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակել Արփինե Նիկողոսյանին.

Կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար 24.01.2017թ. միայն հայցվորի և Արփինե Նիկողոսյանի մասնակցությամբ անցկացված մրցույթի արդյունքում հավակնորդները ստացել են հավասար թվով ձայներ, և տնօրեն չի ընտրվել, ինչի կապակցությամբ Կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ), ՀՀ կառավարության 04.03.2010թ. թիվ 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի (այսուհետ՝ Կարգ) 28-րդ կետի հիման վրա Խորհրդի նիստի արձանագրության և հավակնորդների անձնական գործերի պատճեն-

ներն ուղարկել է ՀՀ փոխվարչապետին, ով նույն Կարգի 28.1-րդ կետի հիման վրա 06.02.2017թ. թիվ 01/01.4/333-17 գրությամբ պատասխանողին առաջարկել է սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր կնքել հայցվորի հետ.

ՀՀ փոխվարչապետի վերը նշված առաջարկին ընթացք տալու փոխարեն պատասխանողն իր լիազորությունների սահմանազանցմամբ դիմել է ՀՀ վարչապետին՝ հարցը նրկին քննարկելու և ՀՀ փոխվարչապետի դիրքորոշումը վերանայելու մասին հանձնարարություն տալու խնդրանքով, ինչից հետո ՀՀ փոխվարչապետը, վկայակոչելով ՀՀ վարչապետի հանձնարարությունը, 01.03.2017թ. թիվ 01/679-17 գրությամբ պատասխանողին առաջարկել է սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր կնքել Արփինե Նիկողոսյանի հետ.

շրջանցելով Կարգի դրույթները և խախտելով դրանցով սահմանված ժամկետները, պատասխանողը ՀՀ փոխվարչապետի 01.03.2017թ. թիվ 01/679-17 գրության հիման վրա 02.03.2017թ. կայացրել է վիճարկվող Որոշումը և նույն օրն աշխատանքային պայամանագիր է կնքել Արփինե Նիկողոսյանի հետ:

ՀՀ վարչական դատարանի 31.05.2017թ. որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Դատարանին:

Դատարանի 06.06.2017թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանի 25.07.2017թ. որոշմամբ գործի քննությանը երրորդ անձի կարգավիճակով մասնակից է դարձվել Արփինե Նիկողոսյանը:

25.07.2017թ. պատասխանողի անունից ներկայացվել է հայցադիմումի պատասխան՝ Որոշումն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին և Կարգին համապատասխան կայացված լինելու մասին պնդմամբ և հայցը մերժելու խնդրանքով:

28.08.2017թ. հայցվորն ավելացրել է հայցապահանջները՝ խնդրելով պարտավորեցնել պատասխանողին կայացնելու իրեն Կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու մասին որոշում և այդ որոշման հիման վրա իր հետ կնքելու համապատասխան աշխատանքային պայմանագիր:

20.02.2017թ. հրապարակված վճռով Դատարանը մերժել է հայցը:

Դատարանի 20.02.2017թ. վճռի դեմ հայցվորի անունից 19.03.2018թ. բերվել է վերաքննիչ բողոք՝ դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով՝ ստորև բերվող հիմնավորումներով:

Դատարանը խախտել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածը, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը, 57-րդ հոդվածը և 61-րդ հոդվածի 1-ին մասը, 17.06.1998թ. ՀՀ բաղ. դատ. օր.-ի 15-րդ և 53-րդ հոդվածները, 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետն ու 130.1-րդ հոդվածը, 21.02.2007թ. ՀՀ դատ. օր.-ի 22-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածը:

Դատարանը սխալ է որոշել քննության ենթակա իրավահարաբերության բնույթը, ինչի արդյունքում գործը քննել է առարկայական ընդդատության կանոնների խախտմամբ:

Սույն գործով ներկայացված հիմնական պահանջը Որոշումն անվավեր ճանաչելու պահանջն է, ուստի սույն գործի ընդդատության հարցը լուծելիս՝ Դատարանը պետք է պարզեր հիմնական պահանջի ընդդատության հարցը: Սույն գործում առկա է ՀՀ վարչական դատարանի 10.05.2017թ. որոշումը, որում արձանագրվել է, որ տվյալ դեպքում վիճարկման առարկա պետք է հանդիսանան Որոշումը և դրա հիման վրա ՀՀ Շիրակի մարզպետի և Արփինե Նիկողոսյանի միջև կնքված աշխատանքային պայմանագիրը, իսկ ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար, փոխվարչապետ Վաչե Գաբրիելյանի 01.03.2017թ. թիվ 01/679-17 գրության իրավաչափությունը կարող է քննության առարկա դառնալ Որոշման վարչարարության իրավաչափությունը ստուգելու պարագայում՝ նշված վարչական ակտն ընդունած վարչական մարմնի դեմ հարուցված հայցի քննության շրջանակներում:

ՀՀ Սահմանադրության 4-րդ և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ ու 52-րդ հոդվածների, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ կառավարության 19.09.2002թ. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Շիրակի մարզպետարանի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը

հաստատելու մասին» թիվ 1792-Ն որոշման թիվ 1 հավելվածի 1-ին և 2-րդ կետերի, Կարգի 28-րդ կետի 1-ին ենթակետի և 28.1-րդ կետի բովանդակությունից ակնհայտ է, որ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության համակարգում գործող Շիրակի մարզպետարանը, որպես պետական իշխանություն իրականացնող մարմին, կոչված է ապահովելու մարզում պետական կառավարումը ՀՀ օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

Մարզային ենթակայությամբ գործող դպրոցի տնօրենի նշանակումն իրականացվում է մարզպետի միջոցով: Մասնավորապես, մրցույթի մասնակիցների թիվը 2 լինելու և տնօրեն չընտրվելու դեպքում ՀՀ փոխվարչապետը մարզպետին գրությամբ առաջարկում է հավակնորդներից որևէ մեկի թեկնածությունը, իսկ մարզպետն այդ գրության հիման վրա որոշում է կայացնում ՀՀ փոխվարչապետի առաջարկած թեկնածուի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու մասին: Ընդ որում, ի տարբերություն ՀՀ աշխ. օր.-ի 86-րդ հոդվածով սահմանված կանոնի, որը գործատուին արտոնում է սեփական հայեցողությամբ մրցույթ անցկացնելու միջոցով կամ առանց դրա համալրելու թափուր կամ նոր ստեղծված աշխատատեղերը, պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) պարագայում մարզպետը պարտավոր է ղեկավարվել Կարգով:

Սույն գործով բննության ենթակա վեճը ծագել է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի՝ մարզպետի, կողմից իր հանրային իշխանական լիազորության իրականացման ընթացքում թույլ տրված խախտումների կապակցությամբ: Մարզպետարանն իրականացրել է պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի նշանակումը, իսկ վեճը ծագել է մարզպետի կողմից իր հանրային իշխանական այդ լիազորությունները ոչ պատշաճ կատարելու կապակցությամբ: Շարադրվածից ակնհայտ է, որ կողմերի միջև ծագել են ոչ թե քաղաքացիական, այլ հանրային իրավահարաբերություններ, ինչն անտեսվել է Դատարանի կողմից:

Գնահատելով պատասխանողի կողմից ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանին ու ՀՀ վարչապետին ուղղված համապատասխանաբար 02.02.2017թ. թիվ 01/829-17 և 10.02.2017թ. թիվ 01/Ս02/1091-17 գրությունները՝ Դատարանն արձանագրել է, որ դրանցում արտահայտված մտահոգություններն ու առաջարկությունները կրել են խորհրդատվական բնույթ: Դատարանն անտեսել է, որ մարզպետն օրենսդրությամբ լիազորված չէ որևէ մեկի թեկնածության վերաբերյալ կարծիք կամ առաջարկություն ներկայացնել պետական մարմնին, իսկ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Ընդ որում, մարզպետի մտահոգություններն ու առաջարկը որպես խորհրդատվական որակելով՝ Դատարանը չի նշել իր այդ եզրահանգման հիմքում դրված իրավական նորմը: Մարզպետի մտահոգությունների ու առաջարկի բնույթը պարզելու հարցն էական նշանակություն ունի սույն գործի լուծման համար, քանի որ հենց այդ մտահոգությունների և առաջարկի հիման վրա է փոխվել ՀՀ փոխվարչապետի կողմից սկզբնապես ներկայացված առաջարկը:

Դատարանը բննության առարկա չի դարձրել ՀՀ փոխվարչապետի 01.03.2017թ. գրությունը, պատճառաբանելով, որ մեկ այլ դատարանում ներկայացվել է այդ գրությունն անվավեր ճանաչելու պահանջ: Դատարանի այս եզրահանգումը ոչ իրավաչափ է: Բանն այն է, որ ի սկզբանե Գոհարիկ Շահբազյանը 03.05.2017թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար, ՀՀ փոխվարչապետ Վաչե Գաբրիելյանի 01.03.2017թ. թիվ 01/679-17 գրությունը (միջամտող վարչական ակտ) անվավեր ճանաչելու և, որպես հետևանք, Որոշումն ու ՀՀ Շիրակի մարզպետի և Արփինե Նիկողոսյանի միջև կնքված աշխատանքային պայմանագիրն անվավեր ճանաչելու խնդրանքով: ՀՀ վարչական դատարանի 10.05.2017թ. որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է: Միաժամանակ ՀՀ վարչական դատարանն արձանագրել է, որ տվյալ գործով վարչական ակտ է համարվում Որոշումը, և որ ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարի 02.03.2017թ. թիվ 01/679-17 գրության իրավաչափությունը կարող է բննության առարկա դառնալ Որոշման իրավաչափությունը ստուգելու պարագայում՝ նշված վարչական ակտն ընդունած վարչական մարմնի դեմ հարուցված հայցի բննության շրջանակներում:

24.05.2017թ. Գոհարիկ Շահբազյանը դարձյալ դիմել է ՀՀ վարչական դատարան՝ այս անգամ վիճարկելով Որոշման իրավաչափությունը: ՀՀ վարչական դատարանը 31.05.2017թ. որոշմամբ արտահայտել է նախորդ որոշմանը հակասող դիրքորոշում՝ կողմերի միջև ծագած վեճը հանրային իրավական բնույթ չունենալու մասին, և հայցադիմումը վերահասցեագրել է Դատարանին: Ընդ որում, հայցադիմումը վերահասցեագրելու մասին որոշումը բողոքարկման ենթակա չէ: Ակնհայտ է, որ Որոշումը վիճարկելիս՝ հայցվորն օրինական ակնկալիք է ունեցել ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարի 02.03.2017թ. թիվ 01/679-17 գրության իրավաչափությունը ստուգելու վերաբերյալ, ինչի կապակցությամբ խնդրել է կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածը: Մասնավորապես, հայցվորը ՀՀ փոխվարչապետին խախտում է վերագրել այն կապակցությամբ, որ Կառավարության տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար արդեն իսկ թեկնածու առաջարկած լինելու պայմաններում նա

զրկված էր երկրորդ առաջարկն անելու հնարավորությունից, քանի որ Կարգով և (կամ) նշված հարաբերությունները կարգավորող որևէ այլ նորմատիվ իրավական ակտով նման լիազորությամբ օժտված չէ: ՀՀ փոխվարչապետը պարտավոր էր հավակնորդներից որևէ մեկի թեկնածությունն առաջադրել նրանց անձնական գործերի տվյալների, ոչ թե ՀՀ Շիրակի մարզպետի գրության և (կամ) դրանում նշված մտահոգությունների հիման վրա:

Դատարանը չի կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, մինչդեռ հայցվորը գործի քննության ընթացքում ներկայացրել է թիվ ԱՎԴ3/0406/02/17 քաղաքացիական գործով ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 16.06.2017թ. հրապարակված և հետագայում օրինական ուժի մեջ մտած վճիռը, որով այդ դատարանը, քաղաքացիական գործ քննելով հանդերձ, կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը:

Դատարանն անտեսել է, որ ՀՀ պետական մարմինները (ՀՀ Շիրակի մարզպետը և ՀՀ փոխվարչապետը) անհարկի և ապօրինի միջամտել են ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածով երաշխավորված՝ Գոհարիկ Շահբազյանի աշխատանքի ընտրության ազատության իրավունքի իրացմանը, մասնավորապես, ՀՀ Շիրակի մարզպետը հանդես է եկել տնօրենի թափուր պաշտոնի թեկնածու առաջարկելու, իսկ ՀՀ փոխվարչապետը՝ նախկին առաջարկությունը վերանայելու նախաձեռնություններով, որոնց համար լիազորված չեն եղել ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով:

Ի խախտումն 17.06.1998թ. ՀՀ քաղ. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի, Դատարանը հանիրավի մերժել է ՀՀ փոխվարչապետ հանդիսացած Վաչե Գաբրիելյանին երրորդ անձի կարգավիճակով գործի քննությանը մասնակից դարձնելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը:

Բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Դատարանի 20.02.2018թ. վճիռը՝ կայացնելով հայցը բավարարելու մասին նոր դատական ակտ, կամ գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան կամ Դատարան՝ նոր քննության:

Վերաքննիչ դատարանի 11.04.2018թ. որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:

06.04.2018թ. պատասխանողի անունից ներկայացվել է վերաքննիչ բողոքի պատասխան՝ բողոքում բերված փաստարկներն անհիմն լինելու վերաբերյալ պնդումներով և բողոքը մերժելու խնդրանքով:

Վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը հետևյալն են:

1) ՀՀ Շիրակի մարզպետը (պատասխանողը) 21.11.2016թ. թիվ 445-Ա որոշմամբ Գոհարիկ Շահբազյանին (հայցվորին) աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ 2016թ. նոյեմբերի 26-ից ազատել է Կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 25.11.2011թ. կնքված թիվ 27/2 աշխատանքային պայմանագիրը:

(հատոր 1, գ.թ. 24)

2) Պատասխանողի 28.11.2016թ. թիվ 476-Ա որոշմամբ Արփինե Նիկողոսյանը 28.11.2016թ. նշանակվել է Կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի պաշտոնում՝ մինչև «այդ պաշտոնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով տնօրենի պաշտոնի նշանակումը»:

(հատոր 1, գ.թ. 25)

3) Կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար 24.01.2017թ. միայն հայցվորի և Արփինե Նիկողոսյանի մասնակցությամբ անցկացված մրցույթի արդյունքում հավակնորդները ստացել են հավասար թվով ձայներ, և տնօրեն չի ընտրվել, ինչի կապակցությամբ Կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը (Խորհուրդ), ՀՀ կառավարության 04.03.2010թ. թիվ 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի (Կարգի) 28-րդ կետի հիման վրա Խորհրդի նիստի արձանագրության և հավակնորդների անձնական գործերի պատճեններն ուղարկել է ՀՀ փոխվարչապետին, ով նույն Կարգի 28.1-րդ կետի հիման վրա 06.02.2017թ. թիվ 01/01.4/333-17 գրությամբ պատասխանողին առաջարկել է սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր կնքել հայցվորի հետ:

(հատոր 2, գ.թ. 36)

4) Պատասխանողը 02.02.2017թ. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանին հասցեագրած թիվ 01/829-17 գրությամբ առաջարկել է Կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակել Արփինե Նիկողոսյանին, իսկ 10.02.2017թ. ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանին հասցեագրած թիվ 01/Մ02/1091-17 գրությամբ խնդրել է նրա «աջակցությունը և համապատասխան հանձնարարությունը»՝ հարցը կրկին քննարկելու և ՀՀ Փոխվարչապետի 06.02.2017թ. թիվ 01/01.4/333-17 գրությամբ ներկայացված դիրքորոշումը վերանայելու համար:

ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար, փոխվարչապետ Վաչե Գաբրիելյանը, վկայակոչելով ՀՀ վարչապետի հանձնարարականը, 01.03.2017թ. թիվ 01/679-17 գրությամբ պատասխանողին առաջարկել է սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր կնքել Արփինե Նիկողոսյանի հետ.

(հատոր 1, գ.թ. 36, հատոր 2, գ.թ. 35, 37, 38)

5) Պատասխանողի 02.03.2017թ. թիվ 90-Ա որոշմամբ (Որոշմամբ) Արփինե Նիկողոսյանը նշանակվել է Կազմակերպության տնօրենի պաշտոնում, և այդ Որոշման հիման վրա նույն օրը նրա հետ կնքվել է թիվ 46 աշխատանքային պայմանագիրը՝ 5 տարի ժամկետով:

(հատոր 1, գ.թ. 33, հատոր 2, գ.թ. 41, 42)

Վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը հանգեց հետևյալ եզրակացություններին:

Բողոքարկված վճիռն առարկայական ընդդատության կանոնների խախտմամբ կայացված լինելու մասին բողոք բերած անձի փաստարկները հիմնավորված են:

17.06.1998թ. ՀՀ քաղ. դատ. օր.-ի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում (ընդհանուր իրավասության դատարանում) քննության (ներկայումս գործող ՀՀ քաղ. դատ. օր.-ի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով):

ՀՀ վարչ. դատ. օր.-ի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի.

3-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինները Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններն են՝ Հայաստանի Հանրապետության նախարարությունները, Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմինները և տարածքային կառավարման մարմինները՝ մարզպետները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, իսկ վարչարարությունը վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողությունը կամ անգործությունը, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ.

53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Գործի քննության ժամանակ գործած՝ ՀՀ նախագահի 06.05.1997թ. «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետի համաձայն՝ կրթության բնագավառում մարզպետն իրագործում է պետական հանրակրթական ծրագրերը, կազմակերպում է մարզային ենթակայության պետական կրթական հաստատությունների գործունեությունը և ուսումնադաստիարակչական աշխատանքները, վերահսկում է ոչ պետական կրթական հաստատությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 5-րդ ենթակետերի համաձայն՝ հանրակրթության բնագավառում մարզպետն ապահովում է մարզի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացումը, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իր լիազորության տակ գտնվող ուսումնական հաստատությունների ընտրված տնօրենի հետ հիմնադրի անունից կնքում է աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.03.2010թ. թիվ 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի (Կարգի).

2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը՝ Խորհուրդը, երեք աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է որոշում տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին:

28-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ եթե հավակնորդների թիվը մեկից ավելի է, ապա հավակնորդների թիվը 2 լինելու և տնօրեն չընտրվելու դեպքում կրկնակի քվեարկություն չի անցկացվում, և Խորհուրդը երեք աշխատանքային օրվա ընթացքում մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների դեպքում Հայաստանի Հանրապետության փոխվարչապետին ... է ներկա-

յացնում Խորհրդի նիստի արձանագրության և տնօրենի պաշտոնի հավակնորդների անձնական գործերի պատճենները.

28.1-րդ կետի համաձայն՝ Կարգի 18.1-ին և 28-րդ կետերով նախատեսված դեպքերում ներկայացված փաստաթղթերի հիման վրա, 5 աշխատանքային օրվա ընթացքում, հաստատության՝ մարզային ենթակայության դեպքում Հայաստանի Հանրապետության փոխվարչապետը լիազոր մարմնի ղեկավարին գրությամբ առաջարկում է հավակնորդներից որևէ մեկի թեկնածությունը՝ օրենքով սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր կնքելու համար.

34-րդ կետի համաձայն՝ լիազորված մարմինն ընտրված տնօրենի կամ Կարգի 28.1-ին կետի համաձայն առաջարկված թեկնածուի հետ 10 աշխատանքային օրվա ընթացքում կնքում է աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

Վերը նշված նորմերի բովանդակությունից ակնհայտ է, որ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի նշանակումը հանրակրթության բնագավառում վարչական մարմնի՝ ՀՀ Շիրակի մարզպետի, իսկ որոշակի դեպքերում՝ նաև ՀՀ փոխվարչապետի կողմից վարչարարության իրականացում է, որն ավարտվում է վարչական ակտի՝ վարչական մարմին հանդիսացող մարզպետի կողմից հանրային իրավունքի բնագավառում (տվյալ դեպքում՝ մարզային ենթակայության պետական կրթական հաստատության գործունեության կազմակերպման բնագավառում) կոնկրետ գործի կարգավորման (տվյալ դեպքում՝ այդպիսի հաստատություն հանդիսացող կազմակերպության տնօրենի նշանակման) նպատակով արտաքին ներգործություն ունեցող և անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն ուղղված անհատական իրավական ակտի (տվյալ դեպքում՝ Որոշման) ընդունմամբ: Սույն գործով Որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջի հիմքում հայցվորը դրել է այդ Որոշումը Կարգի խախտմամբ կայացված լինելու հանգամանքը, մասնավորապես, ըստ հայցվորի պնդումների, ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար, փոխվարչապետ Վաչե Գաբրիելյանի 06.02.2017թ. թիվ 01/01.4/333-17 գրությամբ իր հետ աշխատանքային պայմանագիր կնքելու վերաբերյալ առաջարկ ստացած լինելու պայմաններում պատասխանողն այդ առաջարկին ընթացք տալու փոխարեն Կարգի դրույթների շրջանցմամբ և իր լիազորությունների սահմանազանցմամբ դիմել է ՀՀ վարչապետին՝ ՀՀ փոխվարչապետի իրավաչափ առաջարկը վերանայելու հանձնարարականի ակնկալիքով, ինչի արդյունքում նույն փոխվարչապետն Արփինե Նիկողոսյանի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու վերաբերյալ նոր առաջարկ է ուղարկել պատասխանողին՝ չունենալով այդպիսի լիազորություն: Այլ կերպ ասած, հայցվորը վիճարկել է վարչական մարմնի՝ ՀՀ Շիրակի մարզպետի, հանրակրթության բնագավառում գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում ընդունած վարչական ակտի՝ Որոշման, իրավաչափությունը (զուգահեռաբար՝ նաև ՀՀ փոխվարչապետի գործողությունները), ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ սույն գործով խնդրո առարկա իրավահարաբերությունը կրում է հանրային բնույթ և ՀՀ վարչ. դատ. օր.-ի 10-րդ հոդվածի 1-ին մասի ուժով ընդդատյա է ՀՀ վարչական դատարանին:

Նկատի ունենալով, որ ՀՀ քաղ. դատ. օր.-ի 379-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ բողոք բերած անձի պահանջով, իսկ գործն ընդդատյա է ՀՀ վարչական դատարանին, և գործի վարույթը կարճելու այդ հիմքն առկա է եղել Դատարանում, Վերաքննիչ դատարանը եզրակացրեց, որ տվյալ դեպքում կիրառելի են ՀՀ քաղ. դատ. օր.-ի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով և 380-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված կանոնները, այսինքն՝ բողոքարկված վճիռը ենթակա է բեկանման, իսկ գործի վարույթը ենթակա է կարճման:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման տվյալ գործով վարույթը կարճելու դեպքում, եթե գործը ենթակա չէ դատարանում քննության, հետևաբար՝ սույն գործով հայցվորի վճարած պետական տուրքի գումարները ենթակա են վերադարձման «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով սահմանված կարգով՝ ՀՀ քաղ. դատ. օր.-ի 103-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ. օր.-ի 102-րդ, 182-րդ, 365-րդ, 379-381-րդ հոդվածներով, Վերաքննիչ դատարանը

ՈՐՈՇԵՑ

Թիվ ՎԴ5/0130/05/17 քաղաքացիական գործով, ըստ հայցի Գոհարիկ Կարլենի Շահբազյանի ընդդեմ ՀՀ Շիրակի մարզպետի (երրորդ անձ՝ Արփինե Մկրտիչի Նիկողոսյան)՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջի մասին, Դատարանի 20.02.2018թ. վճռի դեմ հայցվորի կողմից բերված վերաքննիչ բողոքը բավարարել մասնակի՝ նշված վճիռը բեկանել և գործի վարույթը կարճել:

Վճիռը փոփոխելու կամ գործը նոր քննության ուղարկելու վերաբերյալ բողոք բերած անձի պահանջները մերժել:

Դատական ծախսերի բաշխմանը չանդրադառնալ՝ դրանցում միայն պետական տուրքի գումարներ ներառված լինելու և այդ գումարները հայցվորին վերադարձման ենթակա լինելու պատճառաբանությամբ:

Սույն որոշումը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով և օրինական ուժի մեջ է մտնում հրապարակվելուց մեկ ամիս հետո՝ այդ ժամկետում չբողոքարկվելու դեպքում:

Նախագահող դատավոր
Կ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

Դատավոր
Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

Դատավոր
Ա. ՊԱՊՅԱՆ

Սույն որոշումը մտել է օրինական ուժի մեջ:

Նախագահող դատավոր Կ. Չիլինգարյան